ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5.

< 27 >.< 08 >. 2015թ. գ.Վարդաշատ

Տեղի ունեցավ Արարատի մարզի Վարդաշատ համայնքի ավագանու 5-րդ հերթական նիստը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ա. Կարապետյանը,քարտուղարում էր Խ. Ասատրյանը:

Նիստին մասնակցում էին ավագանու բոլոր հինգ անդամները:

Ավագանին հաստատեց հետևյալ օրակարգը:

Օրակարգ - 1.<< Վարդաշատ համայնքում խոտհունձի ավարտը >>:
/զեկ. Ա. Կարապետյան/

2. <<Վարդաշատ համայնքում բերքահավաքի կազմակերպումն ու հավաքումը>>:
/զեկ. Ա. Կարապետյան/

Լսեցին - 1. .<< Վարդաշատ համայնքում խոտհունձի ավարտը >> հարցը, որի շուրջ զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար Ա. Կարապետյանը: Նա մասնավորապես նշեց , որ համայնքի բնակիչների ջանքերով հարթեցվեցին և մաքրվեցին դաշտամիջյան ճանապարհները:
Չնայած համայնքը չունի ոչ մի տեսակի տեխնիկա, որպեսզի Կատասրվեն խոտը հնձելու և հավաքելու աշխատանքները, Սակայն հարևան համայնքներից բերվեցին այդ տեխնիկաները և բարեհաջող ավարտին հասցվեցին աշխատանքները:

Արտահայտվեցին - Լ. Զոհրաբյանը, Հ. Սայադյանը:

Որոշեցին - Վարդաշատ համայնքում կատարված խոտհունձի աշխատանքները համարել բավարար: